




ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՅՊԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ՄՄՄՄՄՄՄ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐՍԵՒ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 Քր. քանք: Բաժանորդագրները դրկեցու է առ մատակարարութիւն Սրբեկէքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալամիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Օտեան Գրեգոր Էֆէնտի. Զէյթունի հրդեհն. Հրկիզելոց աղետալ վիճակը. (Յ. Յ. ԱԼԼԱԶՎԷՐՏԵԱՆ) Կրթութեան սովն ի Ռուսիա. (Պ. Տ.) Տեղագրական. Պոսայ վանք եւ իւր յիշատակ. (Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ) Արծիւն. Քերթուած (ԼԵՌԵՆՑ) Կրթական մագնիտակաւթիւնը. Քննութեան յառաջընթացն եղանակներն եւ վիճակներն. (ՊՕՂԱՍ ԷՄԻՐՁԷ) Զանազանք. Զուարճալի հաշիւ մը. (Հ. ԷԿԻՆԵԱՆ) Քաղաքի Շարժական Լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 21 ՕԳՈՍՏՈՍ

ՕՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԷՔԷՆՏԻ

Հեռագիրք եւ լրագիրք գուժեցին Օտեան Գրեգոր Էֆէնտի մահն:

Արդարեւ ցաւալի եւ անգարմանելի կորուստ: Մարդկութիւնը կը ցաւի մի բարձր անձնաւորութեան վրայ՝ ոյր մտածմանց եւ խորհրդածութեանց առարկայն եղած էր: Թուրքիա կը տրտմի մի հայրենասէրի վրայ, ոյր բոլոր բազմանքն եղած են այս երկրին բարգաւաճումն եւ յառաջադիմութիւնն: Իսկ Հայոց Ազգը կ'ողբայ իւր մի հոյակապ դաւակն ու իւր բոլոր կեանքը նուիրած է Հայութեան քարոզելու առողջ սկզբունքներ ոյց բոլորին ալ կէտ նըպատակին եղած է աւելի սերտ կապերով միացնել Հայերն ընդ Օսմանեան Իսկն:

Պատիւ եւ աւելի ունեցած ենք լսելու այս անզուգական անձն. Ի՛նչ խորին հմտութեամբ եւ փորձառութեամբ կը խօսէր ամէն ընկերական խնդրոց վրայ, ուրք կը յուզեն զմարդկութիւն: Որոշ համազումներ եւ գաղափարներ ունէր այս ամէն խնդրոց նկատմամբ: Ի՛նչ զգացում եւ սիրտ կը

դնէր իւր խօսակցութեանց եւ գրուածոց մէջ, երբ կ'ուսումնասիրէր ընկերական զեղծումները: Գլխաւորն էր նա, կը ցաւակցէր ընկերութեան թըշուառ դատուն վրայ. ասկէ մի քանի տարի առաջ Լոնտոնի աղքատ դատուն վրայ իւր գրած յօդուածները Մասիս օրաթերթի մէջ կը հաստատեն մեր այս ըսածները: Ծանօթ էին իրեն Եւրոպիոյ բոլոր կառավարութեանց ձեւն եւ ուղղութիւնն, անձինքն եւ իրերը. բարեկամ էր ամէն յառաջդիմական գաղափարաց. միով բանիւ չկար խնդիր մը որ իրեն ուսումնասիրութեան առարկայ եղած չլինէր: Կատարեալ խմատասէր մ'էր:

Իբր հաւատարիմ հպատակ եւ իբր բարձրագոյն պաշտօնեայ, խղճի մտօք կատարած է իւր պարտականութիւններն այն ամէն պաշտօններու մէջ ուրք իրեն վստահուած են, անկեղծապէս սիրած է զթուրքիա, եւ իւր պաշտօնական շրջանակին մէջ իւրովսանն աշխատած է նորա բարեշուքութեան: Ընկած այն շողորթ պաշտօնեայնեքէն որոնք միայն իրենց շահը կը մտածեն:

Իբր հայ Օտեան Էֆէնտի վճռական ազգեցութիւն եւ հեղինակութիւն ունեցած է ազգային գործոց մէջ, եղած է երեսփոխան, վարչապետ, Ազգային Ժողովոյ ատենապետ եւ գործակից ազգասէր Պատրիարքաց, եւ այս ամէն պաշտօններու մէջ վարուած է ճշմարիտ դիտակցութեամբ ազգային շահուց եւ հոչակած է ամէն հայու համար ընդունելի սա սկզբունքը թէ Հայոց ազգի շահերն անբաժան են Թուրքիոյ շահերէն եւ հայը կորսուած է քաղաքականօրէն այն օրն երբ որ եւ է քաղաքական պատահարներու տակ, անցնի օտար տիրապետութեան ներքեւ: Ահա այս վերարար սկզբամբ շարժած է Օտեան Էֆէնտի ամէն ազգային խնդրոց մէջ եւ այս եղած է իւր նշանաբանն, որում հայ ազգն հետեւած է դարերէ ի վեր եւ որում պիտի հետեւի անշուշտ ասկէ վերջն ալ:

Իբր գրագէտ՝ թէեւ չունի որ եւ է ստուար հեղինակութիւն, բայց և այնպէս հայերէն լեզուն իրեն համար գաղտնիք մը չունէր, եւ այնպիսի վսեմ եւ համակրալից ոճ մ'ունէր որ ո՛չ ոք մեր ծանօթ գրագիրաց կը հաւասարի իրեն: Քաջալերող եղած էր միշտ գրագէտներու եւ վարժապետաց, եւ

եթէ այսօր ի մի վայր հաւաքուին նորա գրութիւնք, ատենախօսութիւնք, ճառք, յօդուածք, նամակք եւ յառաջաբանք, պիտի կազմեն ստուար հատոր մը ուր պիտի տեսնուին նորա հոգւոյն եւ մտքին վեհութիւնն եւ մեծութիւնն:

Ամէն անոնք ուրք մտեցած են իրեն, մեծ յարգանք եւ հիացմամբ բաժնուած են իրմէ. իւր ծանր խօսուածքը, վեհ շարժուածքն, համակրելի դէմքը, միով բանիւ իւր ամբողջութիւնն այնպիսի մի գիւթիչ տպաւորութիւն կը ներգործէր որ անկարելի էր չխոստովանել մարդու թէ կը գտնուէր մի հոյակապ անձնաւորութեան առջեւ:

Մեր այս գրութեան նպատակն է ցոյց տալ թէ Օտեան Էֆէնտի մարդասէր, հայրենասէր եւ ազգասէր անձնաւորութիւն մ'եղած է, արժանի մեր ամենուս սքանչացման: Նորա ամբողջ օրինակելի կեանքն հիւստուածք մ'է պարտուց կատարման: Հայ պատմութիւնն երախտապարտ ոգւով պիտի գրուատէ նորա բոլոր ազգային գործերն: Երանի՛ իրեն որ կրցած է այսպէս պատմական փառաւոր անուն մը ձգել: Թէեւ մեռած, բայց կապրի նա հայ սրտերու մէջ, վասն զի հայ ապրած եւ հայ մեռած է եւ փառաւորած է իւր ազնիւ ձիրքերով հայ ազգութիւնը:

Ահա այսպէս, այսօր Հայութիւնը կ'ողբայ իւր երկրորդ մեծ ազգասէրն յանձին Օտեան Էֆէնտի, Ներսէս Վարժապետեանէն յետոյ:

ԶԵՅԹՈՒՆԻ ՀՐԴԵԿԸ

Թէպէտ յառաջագոյն մտադրած էինք այս սոսկալի հրդեհին մանրամասն նկարագրին ստանալէ յետոյ գրել մեր կողմանէ հարկ եղածն՝ այլ սակայն հետեւեալ ծանրալիւս պարագայը հարկադրեցին զմեզ կանխել զայն, Ա. տեղւոյն հեռաւորութիւնը, Բ. թղթատարի եւ հեռագրի չգոյութիւնն (աստի մինչեւ Մարաշ կը հասնին), Գ. ձմրան մերձեանքն եւ Դ. անմիջական օգնութեանց յանցումն:

Օգնութիւն արդ. եւ ոչ այլ ինչ, քանզի այլ եւս փարատեցաւ տարակոյտը, գոյծն հաստատեցաւ, Չէյթուն աւերեցաւ սոսկալի եւ սարսափելի հրդեհիւ, որ ամբողջապէս աւերակ դարձուցած է զայն: Լրագրաց մէջ հրատարակեալ զանազան մասնակի տեղեկութիւններէն յետոյ՝ այժմ ճշգրտապէս կարող եմ հաստատել թէ՛ Չէյթունի մէջ հետեւեալ շէնքերը մնացած են միայն. Ա. Աստուածածնայ վանքն աւանդէ կէս ժամ հեռու իրեն մօտ 20-30ի չափ տարբար, Ս. Փրկչեան վանքն երկուք ու կէս ժամ հեռու եւ վերջապէս՝ 1879 թուականին շինուած զորանոցը բլրոյ մը վերայ՝ քառորդ ժամ հեռու:

Ինչպէս կը հաստատեն տեղեկութիւնը՝ հրդեհը գիշերայն պատահած լինելով՝ անկարելի եղած է Չէյթունցոց փրկել իրենց գոյքը, կարասիքն. եւ յիրաւի ուշադրութեան առնելով տանց խտութիւնը, փողոցաց նեղ եւ անկանոնութիւնն (այս վիճակը Պոլսոյ եւ այլ քաղաքաց հետ չբաղդատուելի, ո՛ր եւ է անձ տանիսի մը վերայ ելնելով կարող է ամբողջ Չէյթունի վերայ չըլիլ) իրօք ոչինչ կարող են ազատած եւ անձանց կորուստն իսկ՝ զոր կը ծանուցանեն՝ խորին ցաւակցութեամբ կը յայտնեմ թէ կրնայ պատահած լինիլ այդ ընդհանուր աւերածոյն մէջ:

Չէյթունի մէջ ոչ հրէջ կայ եւ ոչ այլ գործիք, ամեն թշուառ անձ իւր անձին փրկութեան փութացած է: Թողուք աւարքէն ի մի կողմ նկարագրել երկրորդական կարեւորութիւն ունեցող կարգ մը կէտեր եւ իրողութիւններ, անցնիմք կարեւորագուծին, թշուառ Չէյթունցոց այժմեան վիճակին:

Ահա՛ Արիւիկա, ահա՛ Տորոսի կարեւորագոյն դիրքի մը մէջ տալուածուտ լեռան մը զառիվայրին վերայ Չէյթուն ամբողջ այրեցաւեր. ի՞նչ մնացած է, ի՞նչ է երեւոյթն այժմ:—Չըջակայ բարձրաբերձ ազաւածուտ լեռներ, տեղ տեղ մաս մաս հողերու վերայ այգիներ մտաւոր եւ հեռաւոր, որթեր երաշուտեանէ խամբեալ, ցորեան եւ արմտիք չկայ, հալորդակցութեան ճանապարհը դժուարին, դրամ չի կայ, ուտեստ չկայ, հազուստ չկայ, բժիշկ չկայ, դեղ չկայ եւ այլ ամենայն կենսական պիտոյք չկայ, հեռու իրենց արեւակիցներէն, հեռու օգնող ձեռքերէ, որոց ակնկառոյց կ'սպասեն հալարաւոր այր, կին, տղայ, աղջիկ, մանուկ, արտասուք յաջս, գոյժակոխ ողոր ի բերան, ո՛ւմ ուղղեն իրենց ցաւն ու հեծեծանքն, ուստի՞ խնդրեն իրենց օգնութիւն, կտոր մը հաց, հագո՛ւստ, պատասպարան:

Ինչպէս ըսինք՝ ի չգոյէ թղթատարի եւ հեռագրի բանքերն հոգին ի բերան հազիւ մէկ օրէ կը հասնի ի Մարաշ եւ անտի թէպէտ հեռագիր կայ, բայց նամակ մը թղթատարաւ կը հասնի աստ տասն եւ եօթ

օրէն. անմիջական պատասխանատուութեամբ եւ արդէն պատրաստեալ նպաստից փութացուցմամբ 32-40 երկար օրերու մէջ հաղիւ կարելի է բանակցիլ Չէյթունցոց հետ, յորում կը հասնիմք սեպտեմբեր ամսոյ վերջ եւ յայնժամ աշնանային անձրեք սկսած են արդէն եւ ձմրան սկզբնաւորութիւնը զգալի եղած:

Ընտանեօք երկու տարի անդ բնակած եւ տեղւոյն ձմրան սաստիկութիւնը զիտնալով՝ այժմէն եթէ նպատք չփութացուին՝ խորին ցաւով կը յայտարարեմ թէ՛ վերջին աղէտն աննկարագրելի պիտի լինի եւ մեր պատասխանատուութիւնն առաջի Աստուծոյ եւ մարդկան յոյժ ծանր:

Յառաջ քան սկսելու օգնութեան հրաւիրանաց՝ չեմ կարող գրիչս առաջ տանիլ առանց խորին երախտադիտութեամբ օրհնելու մեր բարեխնամ Օսմ. կայսրութիւնը, մանաւանդ այժմեան մեր օգնութեամբ վեհ. Սուլթան Համիտ մեծ կայսրն, որոյ ընդ հովանեաւ կ'ապրիմք եւ կը վայելեմք յարածամ իւր հայրական գործն եւ բազմադիմի շնորհն. արդարեւ շատ մեծ է մեր զբթառատ կայսեր խնամածութիւնն առ հրպատակա իւր, այնչափ մեծ եւ այնչափ շնորհակալութեան արժանի՝ որ սարտաւորած է զմեզ հանապօզոր երախտագէտ սրտիւ աշօթող լինիլ Նորա անգին կենաց. Տէր Աստուած ի բազում ամս բարեբաստիկ կենօք պահէ զինքն ի վերայ իւր փառապանծ գահուն, շնորհէ եւ երկար կեանս նաեւ իւր նախարարաց եւ աւագանւոյն:

Ահա՛ մեր Օգոստոսիան Կայսրն ի լուր աղէտին հայրարար հրամայեց օգնել եւ ընձեռել անմիջական օգնութիւն իւր հաւատարիմ հպատակայն Չէյթունի. և մինչդեռ մեր, մեր թշուառ եղբարց գեռ ու է օգնութիւն չեմք ըրած 22 օրէ ի վեր՝ նոքա ըստ կարելոյն պատասպարուած լինելու են, անտարակոյս Բերիոյ եւ Մարաշի իշխանութիւնը հրամայած են ի Չէյթուն զորանոցի հրամանատարին եւ թշուառքն պատասպարած զինուորական վրանաց տակ եւ կամ առաւել օգտակար կերպիւ. այսօր գիտեմք եւ կը հաւատամք որ կառավարութիւնը նոցա ուտեստ ևն. կը բաշխէ, ինչպէս որ Չէյթունի 1884 թուականի մասնակի հրդեհին ատեն շնորհեց. այլ այսու ամենայնիւ թշուառութեան աստիճանն երեւակայելով՝ պարտիմք եւ մեք մեր օգնութիւնն ընձեռել այդ թշուառաց, որք մեր եղբարքն են եւ փութալ ժամ յառաջ մեր բարեխնամ Կայսեր հայրական խնամոց ավակցիլ նիւթապէս: Այս հարկ անհրաժեշտ է երկու տեսակէտով, նախ՝ իբր մեր արեւակիցքն պարտիմք օգնել նոցա, երկրորդ՝ նկատելով թէ մեր հայրսնամ կառավարութեան զբաղմունքն եւ նպատակուտեղերը շատ են, զորօրինակ Արմաւուտ գիւղի հրկիզելոց, Ատանայի եւ այլ տեղեաց սովելոց, Իւսկիւտարի հրկիզելոց ևն. որոց մինչդեռ նպաստ կը փութացնէ՛ վայելուչէ մեզ, իւր կարող որդւոց, անտարբեր հանդիսատես լինիլ, եթէ ոչ՝ օգնելով մեր եղբարց, իւր միւս որդւոց, թեթեւել իւր հօգն ըստ կարի եւ սովաւ եւս առաւել հոճեցիլ թուիլ յաջս իւր հայրութեան այն, այն տեսարք եւ տիկնայք, մեր հայրախնամ կառավարութիւնն իսկ հարկ դրած է ի վերայ մեր օգնել մեր եղբարց. ո՛չ ապաքէն յանցելու մն աստի մի աւուր ճանապարհաւ հեռի Աշխաղէկ գիւղի հրկիզելոց օգնեցիմք եւ բարեխնամ կառավարութեան աշակցեցանք, ո՛չ ապաքէն այդ օգնութիւնը եւ նպատք ի գիշերայն հաւաքեցան ի թաղս Գատը գիւղի եւ այլոց, ինչնաեւ մեր թաղին մէջ քարոզիչ Գեր. Հրմայեակ Արքայանի առաջնորդութեամբ: Արժ. Տ. Խաչատուր բահանայ եւ Թաղական Խորհրդոյ պատուարժան անդամք ամեն տան դուռը բաղնիքով դրամ եւ ագանեւ լիք հաւաքեցին. ընդէ՛ր ուրեմն աւելի հեռուն, աւելի կարօտ, աւելի թշուառ մեր եղբարց չօգնեմք, չփրկեմք մեր եղբարքը կորստական վիճակէ մը:

Վստահ լինելով թէ ամեն հայ պիտի փութայ մասնակցիլ ազգային հանդանակութեան մը՝ իմ կողմանէ թշուառ Չէյթունցոց կրած աղէտը թեթեւցնելու նպատակաւ հետեւեալ առաջարկութիւնքս կը ներկայացնեմ Ամեն. Ս. Պատրիարք Հոր եւ Ազգ. Կեդր. Վարչութեան յանմիջական գործադրութիւն:

1. Խնդրել հեռագրաւ Արիւիկոյ վեհ. կաթողիկոսէն եթէ գեռ չէ գացած երթալ ի Չէյթուն եւ մնալ անդ մինչ յառաջիկայ գարուն:

2. Յուզարկել աստի ի Չէյթուն Կ. Պոլսոյ վիճակէն բանխուս վարդապետ հարկ եղած հրահանգօք, յաջակցութիւն վեհ. կաթողիկոսին, տեղւոյն առաջնորդի եւ ի սպիտանս տեղացոց եւ մնալ անդ բաւական ժամանակ. այսպէսով Արօնական պատկ. Ժողովոյ որչա՞ռ գաւառական այցելութեանց սկզբնաւորութիւնն եւս կը լինի ի զկար ցաւալի պատահարին:

3. Խնդրել ի կայս. բարեխնամ կառավարութենէ՝ որ յուզարկէ աստի եւ կամ Բերիոյ կառավարութենէն առ նուազն երեք հատ բժիշկ եւ դեղ. բանդի Չէյթունի ցորանոցիմք վերաբարձ է եւ Մարաշի մէջ հատ հաղիւ բաւող իւր գնդին:

4. Նպատակաւ մանաժողով մը կազմել աստ ի Պատրիարքարան, որ ունենայ մասնաճիւղեր ի Մարաշ եւ ի Չէյթուն եւ նախ քան զամենայն նպատակաւ ձեռնակեղէն պատրաստել նոր եւ հասկտաւէ, չապիկն արանց եւ կանանց հաւասար երկար թեւերով ըստ տարազաց տեղւոյն եւ ներկեալ կամ Մարաշի տեղական կտաւէ պարեգօտ, գուրպակ, կոշիկ, վերմակ ևն:

5. Առատ ցորեան ուղարկել մինչ ի գարուն բաւելի:

6. Պատրաստ դրամ յուզարկել իրենց այլ պէտքերն հոգալու եւ տները շինելու:

7. Աշնանային ցանն հողաւ այժմէն:

Այսօրիկ եւ այլ անհրաժեշտ պիտոյք մասին Հայոց ազգէ ամեն անհատի ուր որք եւ գտանին խորին ուշադրութիւնն հրաւիրելով յանուն թշուառ Չէյթունցոց գթութիւն կը հայցեմ: Ասկէ 10-15 տարի յառաջ երբ աղէտ մը պատահէր ուր եւ լինէր այն ազգային լրագիրք յաճախ յօդուածներ կը գրէին ժողովրդեան գոթը շարժելու եւ իրենք իսկ հանդանակութեան տոմարներ կը բանային հրաւիրելով ժողովուրդը մասնակցելու եւ կը յաջողէին ահա՛ անցեալ շաբաթ օրուան Ա. Ե. Բ. Բողոքականաց կրօնական թերթը բացած է նպատակ տոմար մը, բանդի ի Չէյթուն թողրականք եւ Հասակականք եւս կան ինչպէս նաեւ 30-40 տանց չափ Մահմետական հայրենակիցք. եթէ նոքա կ'օգնեն իրենց ժողովրդեան, մեր ընդէ՛ր չօգնեմք մերայնոց եւ մասն ամենեցուն եւ չսկսիմք հանգնակութեան:

Աղէ՛, օգնեցէ՛ք, եւ ողորմեցէ՛ք ո՛ մեծատուրք, հարուստք, օգնեցէ՛ք միջակ կա-

դոթէին սրտաբաց . . . ճիշդ հարսդ պարծա- նաց եւ մայր մեր ազանց՝ հայցեա՛ ի փե- սայէդ վասն հէզ մանկացս . . . » :

Կրօնի եւ հաւատոյ նախանձանդորու- թեան հետ , ջերմ բարեպաշտութիւնը՝ մեր երկրի ժողովրդեան՝ մանաւանդ հայ գեղ- ջուկներին սրտի մէջ աւանդաբար մեծ տեղ բռնած է : Այդ բարի օրինակը՝ խոր տպա-ւորութիւն կը գործէ տակաւ նորա մատող սերնդեան անարատ սրտին , ինչպէս արեւ-ւի շողողուն ճառագայթների թափումն- ցումը թանկագին յասպիսին : Այս պարտա- գան՝ իր առաջնութեամբ՝ գեղջուկ պա- տանեաց եւ օրիորդաց՝ ցնծութեան վայր- կեանքներին եւս իր կարգը պահելով՝ իրա-ւունք կուտայ մեզ շեշտելու թէ այդպիսի- եաց է միայն հայրդի անունն :

Կը վերջանայ այդ խումբերի ազօթից աղանակերով ֆրանկները : Տաճարէն դուրս , վանուցս գուարներն գարնան հեղուկակերպ քակորներով ծեփուած քառակուսի փակի մէջ՝ տնտեսատան (սոհանոցի) դրան առ- ջեւ խմբուած , խորհուրդ կ'ընեն մեր խումբին Համաբանումը շնորհաւորելու :

Այն ինչ մտքերնիս երեւակայութեանց անծայրածիր հորիզոններէն վեր դեգերե- լով անցեալ , ներկան եւ ապագան իրենց ուրուականներով՝ Սամուէլի վայրկեանական ուրուականի նման մեր յիշողութեան մէջ կը կենդանանային , ու մենք մտախոհու- թեան տարօրինակ երեւոյթի մ'ազգեցու- թեան տակ լուռ եւեթ մերթ յերկինս եւ մերթ յերկիր կը հայեիմք . . . , մէկ էլ կը տ'անենք որ այդ անմեղ խումբերը՝ մեր առջեւ դրուած սեղանի մօտիկ , իրենց հրեշտակատիպ չքնաղ կերպերով գեղեցիկ շղթայ մ'են կազմեր : Վախարձման հարսըը համեստութեամբ մը կը համբուրէ մեր ա- մենուս ձեռքը՝ նուիրելով մեզ՝ ստուեն եւ բերուն՝ գինեբուկ եւ նարդիկ՝ եղեմա- կան ծաղիկներէ հիւսուած մէյ մէկ փուն- ջեր : Յետոյ նոյն բուրակի կեդրոնի մէջ կայնելով՝ հանդիսական գեղուհիներէն չորս հատ աշխոյժ կոյսեր կ'սկսին իրենց ձիւնա- փայլ փափուկ ձեռքերով ծափ դարնել ու քաղցրաւոր քնարէ մ'անուշ և սիրազեղ ձայ- ներով երգել այս երգը :

- Շովու արներ դամիչ էր
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Միջու , միջու էմիչ էր :
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Նուպար չըլսու՛) քըմիչ էր :
- Սողթի մաղայ Նուպար :
- Նուպարի աչքեր խաթ էր²⁾,
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Մեր Նուպար բարակ բաժ էր³⁾
- Սողթի մաղայ Նուպար :
- Փառ մը կէր ծիրանի ,
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Քամին թել թել կը տանի ,
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Սողթի մաղայ Նուպար :
- Նուպարի արտն էր պիար⁴⁾,
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Տի՛ ցանեմ սաճար⁵⁾ խիար ,
- Սողթի մաղայ Նուպար :
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Իմ բաժ քո բաժ բարէնպար⁶⁾,
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Խնձոր կիսեմ , արի՛ տա՛ր ,
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,

1 Արէն . 2 Աչու . 3 Հասարակ . 4 Աւանց ցանկելու . 5 Ընտիր . 6 Հաւատար .

- Լուս գիշեր , Լուսնակ գիշեր ,
- Սողթի մաղայ Նուպար ,
- Ատուած պախայ⁷⁾ քո ճմեր⁸⁾
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Սողթի մաղայ Նուպար :
- Մէկ սանախէր մէկ քաւոր
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Նուպարն ըրի ըլսմաւոր⁹⁾ :
- Սողթի մաղայ Նուպար :
- Սաղմուն ի ծոց տպաստար ,
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար ,
- Աւանից ասի չիման¹⁰⁾ էր ,
- Սողթի մաղայ Նուպար ,
- Մեր վարդապետ անհիման¹¹⁾ էր :
- Վայ Նուպար , Նուպար , Նուպար
- Ճամխեր¹²⁾ Նուպար կը տանէր ,
- Սողթի մաղայ Նուպար :

Գեղջուկ Շուշանայ այդ համեստուհի հարսը՝ սոյն երգ գեղեցիկ ու սոխակաց նը-ւագով , այնքան վարժ եւ գեղեցիկ ձեւե-րով կը խաղար ու կը փարատէր պահ մը մտածմանց այն ամպերն՝ որոնք կը մթա-գնէին մեր տեսութեանց հորիզոններն : Եր-քան անմեղ եւ սուրբ իրենց գրօսանայ տե-սակն եւ խորհրդաւոր նորա նպատակն : Աւստի մէկ քանի դահեկան նուէրով չմոռ-ցանք յիշել այն պարագ , որ կը լծօրդ է մեր սրտի հետ յաւէտ անմոռաց եւ յոյժ քաղցր մի յիշատակ :

Ղ . Պ . ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Պետերբուրգում , ներկայ տարուայ Հոկտեմբեր և Իեկտեմբեր ամիսներում կը հրատարակուի « ԵՐԱՍԻ » անունով պատկերազարդ հանդէս մը :

Ամեն մի գիրքը բաղկանալու է մո-տաւորապէս 200 երեսից ու թաժալ գիր-քով : Տպագրութիւնը , թուղթն և նը-կարերը լինելու են չքեղ : Բաժանորդա-գիրն է 3 ռուբլի , այն է 30 զրչ :

« ԵՐԱՍԻ » ը խմբագրվում է գործին տեղեակ անձինքներից հետեւեալ ծրա-գրով .

Ամենակենսական նշանակութիւն ունե-ցող հասարակական խնդիրներ , վէպիկներ , վիպասանութիւններ , կենսագրական նիւ-թեր , ճանապարհորդութիւններ , տեղա-գրական , աշխարհագրական և ժողովրդա-գրական գրութիւններ , բանաստեղծու-թիւններ , թատրոնական գրուածքներ , գի-տական յօդուածներ՝ զիւրամատչելի լե-զուով ու իմաստով՝ կրթական , մատենա-գրութիւն , թղթակցութիւններ , մասնա-ւորապէս օտարերկրեայ հայերի կեանքից , հայ եւ եւրոպական գրականութիւն ու նոցա ներկայացուցիչները , քաղաքական տեսու-թիւն , լրագրաց շուրջը , քրոնիկոն , ազդա-յին յիշատակարան , լուրեր , յայտարարու-թիւններ :

Հանդիսին մասնակցում են եւ օտար-երկրեայ անուանի հայ գրագէտներ :

Բաժանորդ գրուողները , ցանկալի կը լինէր , որ առաջ յայտնէին իրենց ցանկու-թիւնը :

« ԵՐԱՍԻ » ի վերաբերեալ ամենայն գոր-ծերի մասին պէտք է գիմել Սիմէօն Գու-լամիրեանցին հետեւեալ հասցէով .

S. Goulamiriantz
St. Pétersbourg
Poste Restante

7 պահէ . 8 Զաւակներ . 9 Աւստար . 10 Մար-գադեպին . 11 Անհաստ . 12 Ղրկեր :

Ա Ր Ծ Ի Ի Ը

Եւ անյայթ , եւ դոռող արծիւը սըրաւես Թուշում էր աշխարհիս մի երկնից միս երկիր- Մերթ երկնի խորերում մի սե կէտ էր ասես , Մերթ ամբողջ թաղվում էր ամպերում սուս- կալիր :

Եւ նա խիտ նայեաց էր դէպի հողը գըլցած . Արհամարհանք նրանում , առելու թիւն էլ կար Դէպ՝ այդ հողն մարդկային Եւ ա-րագ . զայրացած Դէպի այլ երկիրներ սլանում էր անդադար :

Ահա՛ ցածր . . . դա մի մեծ երկիր է , որ իրան Մեծամեծ մարդերով հպարտանում է գով-վում .

Այնտեղ կեանք է եռում , ամենքն ու ամեն բան Այնտեղ դէպ որոշ կէտ գընում են , ըլտա-պում :

Մէկ այլ տեղ՝ այլ երկիր . նրա բանւորն իր գըլցակ Բարձրացնում է խորխոր՝ արդարն է պա-հանջում :

Գիտութիւնն այնտեղ քայլերով համարձակ Առաջ գնում , ամենայն ցանկութիւն , ոյժ ծաղկում :

Ուրիշ տեղ՝ հիւսիսում՝ բուժութեան դէմ կուած՝

Արդ արներն յոգնած են , լըուութիւն է հիւսա-Բայց կը գայ շուտ ժամը , երբ մրրիկն կա-տաղած ,

Շղթայից իբր փրկուած , կ'ազմիէ կը խորիս-պի :

Հողազնդիս մէկ այլ երկրում էլ մարդ իկը Ինքնագոհ , ծոյլ , անբան մի կեանք են միշտ վարում :

Մի երկրում օրհասի լըսում սպառնալիքը , Միւս երկրում հազիւ հազ դէպ լաւը խար-խափում :

Եւ արծիւն թռչելով նայում է այդ բոլոր երկիրների վրայ լուռ , և փայլում նրա աչքերս՝ Մինչդեռ նրա սիրտն ազատ սլանում է հե-ռուոր :

Մի երկիր . . . ուզում է նա տեսնել զրա հողեր :

Հէնց այնտեղ՝ այն երկրում մի բարձր գոռ լեբան

Վէս , խոժոռ ժայռի տակ քարանձաւում նըսեմ ,

Որին ամպերն զրկում , համբուրում մեղմա-նեան ,

Նա ծընուել էր մէկ օր հըպարտ ու զուար-թաղէմ :

Վաղուց էր չէր տեսել իր երկիրն հայրենի : Վաղուց էր , որ նա չէր սաւառնել նրա վը-րայով . . . :

Եւ շտապում էր նա շուտ , սըլանում էր դէպի Այդ երկիրն հարագատ՝ սրտատրոփ ու վըր-գով . . . :

Եւ արծիւը հասաւ . . . : Նրա գլխին երկինքը Մուլթ , խոժոռ ամպերով լիպպէս էր ծած-կուած :

Լեռներն ըսպիտակ խիտ սաւանի տակը , կարծես յաւէտ թաղուած՝ թմրած էին մեռած :

Դաշտեր ու հովիտներ , ձորեր ու անտառներ : Իրեղեր ու քաղաքներ . . . բուրն էլ ցիբ ու ցան :

Ասես աւերակներ՝ անկենդան ու անտէր, Անշարժ ընկած էին այդ երկրորդ շուտականս:

Մի նշող էակ էլ բնաւ չէր երեւան... Հարազատ իր երկրին տիրած էր միայն սառ Մեռելութիւն, խաւար, որպէս մեծ գերեզման:

Մութ, խոժու երկիրն էլ իր տապան... Սէւ աշխարհ...:

Եւ արծիւն այդպէս գտաւ հայրենի երկիրը... ձմրեց գոռ խորաւ, թեւերը թուլացան, Աւազուտ իրեն զգաց, միտեցան աչքերը Եւ աղի արցունքներն առատ հոսեցան:

Այդ ժամանակ նա վեր՝ երկիրը նայեցաւ Անէծքի նայեցաքով, իր շուրջն էլ աչածեց, Շարժեց իր թեւերը, գլխովայր գլորուեցաւ Եւ խաւար անդնդում յաւիտեան նա թաղուեց:

ԼԵՌԵՆՅ

Կ Ե Ն Դ Ա Ն Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ն Ի Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Բ.

ՔՆԵՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԲԵՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ԵՒ ՎԻՃԱԿՆԵՐՆ

Չանագան վիճակագրութեանց վրայ ակնարկ մը ձգելով, քննադատ անձանց թիւը գրեթէ 90 ըլլաւ կը նշմարենք:

Այս համեմատութեան չափազանցումը անհերքելի է, ըստ որում ամեն հասակի, սեռի, կազմուածքի անձինք կը պարունակէ: Բայց եւ այնպէս քննածին (hypnogène) հոսանքի մը ազդեցութեանց փոփոխիչ բազում պտորագայներ կան յորս են խեղդարտեք եւ իւր տեսակներն, ընդհանուր յառաջխաղաց անդամալուծութիւնն, ախտաբանութիւնն (hypochondrie), եւ սոյն վիճակաց մէջ կը թուի թէ ուղեղային կարողութիւնը չկարենալով բաւականապէս կեդրոնանալ, կ'արգիլեն մինչեւ աստիճան մը քննութեան յառաքելութիւնն:

Իսկ ընդհակառակն, արգանդախեղդ հիւանդութիւնք (affections hystériques), վերնոտուութիւնն (épilepsie), կանաչախտ (chlorose), ամենազգի սակաւարիւնութիւնք (anémie), որ սրտի կամ երկխամանց խոցուածներէ կը ծագին, ալքոլիկանութիւնն, աստղիկեան ծայրայեղութեան յաւորող ջլատութիւնն, եւ այն համայն վիճակք որք ուղեղի ուժականութեան (dynamisme) պաշտօնավարութիւնը միայն կ'այլալեն, այլ եւ այլ հանգամանքներ են որ տարօրինակ կերպիւ կը կանխատրամադրեն զմարդ քննութեան ազդեցութեանց:

Իգական սեռն զոգցես իմն պատրաստական է քննացման, որովհետեւ եթէ կընկան կամ ըստ Հալի բացատրութեան ամորգիկութեան այս վաղայուն մասին գործարանութիւնն ի նկատ առնելով, ջլային ջրութեան առաւելակիւնութիւնը պիտի տեսնուի, եւ առանց չափազանցութեան կրնա՞նք եզրակացնել թէ ի պատանեկութեան եւ ի չափահասութեան, ամեն կին կը քննանայ եւ 45էն մինչեւ 68 տարեկան Պրէշտի քննացուցած կանանց թիւը մէկէ աւելի է:

Սակայն յաղթանդամ եւ ողջակազմ եւ

միանգամայն քննանալի անձանց թիւը շատ աւելի նուազ է, եւ ըստ վիճակագրութեանց գրեթէ 50 է:

Գրով արական սեռին, Պէրնէպմի եւ Լիէպոյի փորձերը կը հաւաստեն թէ քննանալիութիւնն (hypnotisabilité) 10 է: Օտջովէջ բազմաթիւ խուզարկութիւններէ հետեւեցուցած է որ մագնէտը քննական երեւութից ցուցանիչն ըլլայ: Արդարեւ քննական եւ մագնիտական զգայականութեանց մէջ մի սերտ յարաբերութեան գոյութիւնն առանց հերքել ուզելու, պատշաճ կը դատենք չափաւորել սոյն եզրակացութիւնն, որովհետեւ յաճախ տեսնուած են անձինք որ քննութեան բարբոսին տնտեղիտալի են, մինչդեռ մագնիտի միջոցաւ, թէ անզգայութեան եւ թէ անդամալուծութեան շրջման եւ տեղափոխման երեւութից կըրնան ենթակայ ըլլալ:

Քննութեան յառաքելութեան համար ի կիրարկեալ միջոցները բազում են, բայց եւ այնպէս յետագայ երկու եղանակներէն միոյն գիմելն անհրաժեշտ կը համարուի, երբ փորձն առաջին անգամուան համար տեղի կ'ունենայ:

Ա. Սեւեռումն աչաց կամ որ եւ է փայլուն առարկայի վրայ:

Այս վերջին պարագային մէջ պէտք է առարկայն ակնային առանցքէն քիչ մը բարձր բռնել եւ յառաջ եկած վերին եւ ծայրամէտ թիւրակնութեամբ կերպով մը աչաց խոնջութիւն պատճառել:

Բ. Կախուցումն կոպից որ հետեւեալ կերպով կ'ըլլայ. թիկնաթուի մը վրայ ենթակայն նստեցնել վերջը, փորձողն բութամատով եւ ցուցամատով նորա աչքերը կը զոցէ եւ մի եւ նոյն ժամանակ ամենաթեւ ճնշում մը կ'ընէ ակնային գնդիկ վերայ, իբր յենակէտ ընտրելով ճակատն ուր ձեռաց ափով պէտք է յենուլ: Այս վերոյիշեալ երկու եղանակաց մէջ ալ, թէ ճակտին վրայ եւ թէ գլխոյն գագաթին վրայ մատերով քիչ շատ զորաւոր ճնշում մը ընելը խիստ արդիւնաւէտ նկատուած է: Փորձի ժամանակ թէպէտեւ բացարձակ լուծութիւն անհրաժեշտ չէ, սակայն յոյժ նպատաստուր է բաց աստի, ենթակայն պարտի լիովին հաճ եւ հաւան լինել առանց որ եւ է բարոյական յուզում ունենալու: Քննութեան սրտագրման համար պէտք եղած ժամանակն յոյժ փոփոխական է: Եթէ անձը նախընթաց փորձեալ ենթարկուած է, քննութիւնը գրեթէ վայրկեանական է, մինչդեռ առաջին փորձի մը համար՝ ընդհանրապէս 35ն մինչեւ 20 վայրկեան եւ մերթաւելի պէտք է:

Իսկ երբ ջլային բունը շատ յապաղի, լու եւս է երկրորդ կամ երրորդ նստի թուլ:

Արթնութեան վիճակէ ի քննական վիճակ անցումն յաճախ անզգալի կ'ըլլայ: Այսու ամենայնիւ, այն անձանց վրայ, որք զժուարու կը քննանան, թմրութիւն մը, աչաց ծանրութիւն մը կուզայ, որ նախագուշակ երեւոյթներ են եւ գոգցես իմն ենթակայն կ'զգայ քննածին հոսանքի մը իր վրայ տարածուիլը:

Սոյն ազգի անձինք բուն ընդ արթունս ըլլալով կարող չեն աչքերնին բանալ, իբրեւ թէ կոպերն իրարու միացած եւ կպած ըլլան:

Մորթային, զգայականութիւնն անեղծ կը մնայ, միայն փորք ինչ ջրամկանային գերզգուականութիւնն (hyperexcitabilité névro-musculaire) կ'աւելնայ: Արտաքին

առարկայից ճանաչումն կիսակատար է եւ պարզ ստորադասութեամբ եւեթ կրնամք զանազան զառանցանք եւ պատրանք յառաջ բերել:

Զարթնէլէ յետոյ ենթակայն հաղիւ հազ կը յիշէ ինչ որ անցաւ նիրհման մէջ:

Ահա այս վիճակն է զոր Շամիար (étude sur le somnambulisme, 1880) զգաստաւոր քննութիւն (léthargie lucide) կոչած է, եւ ճշդիւ կը համապատասխանէ Լիէպոյի քննարկութեան առաջին աստիճանին, եւ զրախօս ու շաղակրատ մագնիտոդներու հեղափոխական վիճակէն (état de charme):

Կան անձինք որոնց վրայ այս նախաքննական վիճակն միմիայն կրնամք յառաջ բերել:

Հուսկ ուրեմն քննութիւնն մեզ երեք վիճակաւ կը ներկայանայ. Ա. քննութիւն կամ քննարկութիւն (léthargie), յորում ենթակայն իւր թմրութեան մէջ ընկղմած, զգայարանաց գործածութիւնը կը կորուսէ: Բ. Աւազարձութիւն (catalepsie), յորում ենթակայն իրեն տրուած որ եւ է գիրքն անսահմանապէս կը պահէ: Գ. Քննարկութիւն որ ուշաբարձութեան նման ըզեղային գիտակից գործունէութեան եղծումն, եւ ընդ հակառակն մտային բանի մը պաշտօններու առաւելութիւնն է: Արդ ամէն ոք մի եւ նոյն աստիճանաւ չքննանար, այնինքն կան անձինք որ քննութեան երեք վիճակներն ալ կը ներկայացնեն, եւ զորս մեք գիւրիմացութեան համար ուշաբարձելի (catalepsiable) պիտի անուանուի: Երկրորդ կարգ մ'ալ կայ որ երկու վիճակները միայն կը ներկայացնէ: Վերջապէս երրորդ կարգի ենթակայք որ միայն մէկ վիճակաւ կը ներկայանան:

Բայց եւ այնպէս մի եւ նոյն անձը կըրկնապատիկ փորձերու ենթարկուելով, կրնայ նոր վիճակներ ալ ստանալ:

Ա. Քննարկութիւն

Քննարկութիւնն իբր նախնական վիճակ ի ստորեւ յիշելի եղանակօք կրնամք ընդունիլ. Ա. աչաց սեւեռման, կամ որ եւ է փայլուն առարկայի մը (արձաթեայ զրգալ) անըթիթ նայելով: Բ. կոպից կախուցում: Գ. զլխոյ վերին մասին վրայ մէկ կամ մէկէ աւելի մատամբ ճնշելով: Դ. յանկարծական եւ անակնկալ հնչիւնով (Ձիւնաց կոնկ, ծնծղայ): Հայտնի հայտ ժամացուցի թիթաքով մի միայն կարողացած է քննացնել երեք ուսանողք ի բժշկութեան: Ե. պարզապէս յուշարարութեամբ եւ որոյ վերայ արգէն վերստին պիտի խօսինք: Զ. սաստիկ լուսաւորութեան արդեամբ (մագնիստիկ կանդեղ, ելեկտրական լոյս): Աւելորդ է յարել թէ ենթակայք ստէպ կրնան իրենք գիրքն քննացնել, եթէ կարգ մը նախընթաց փորձերով վարժուած ըլլան:

Քննարկութիւնը կը ծնի նաեւ իբր երկրորդական վիճակ, ուշաբարձութեան հետեւանք ըլլալով եւ այս՝ զանազան եղանակօք: Ա. կոպից կախուցում: Բ. աչաց վերայ թեթեւապէս փշելով (փշման քիչ սաստկութեան համար մեր ազնիւ ընթերցողաց ուշադրութիւնը կը հրաւիրելով, որովհետեւ զորաւոր փշուրը փոխանակ արթնութիւն յառաջ բերելու, ենթակայն քննական վիճակին փոփոխման պատճառ կ'ըլլայ): Գ. զլխոյ վերին մասին վրայ փափուկ շփում մը: Յետագայ սողերուն մէջ յաճախ առիթ պիտի ունենամք այս վերջին եղանակն յիշել, եւ զայն գիւրբարձելի ընելու համար, կրճատելով կառափնացուցումն (réflexe du vertex) բարդ բառով պիտի անուանուի:

Քննափութեան մէջ գտնուող ենթակայի անդամը կատարեալ լուծման (résolution) մէջ է. գլուխն սուսց վրայ հակեալ, եթէ անդամաց մին սակաւիկ մի վեր բարձրացնեմք, իսկոյն թոյլ եւ ջլատ, վար կ'իյնայ: Մինչդեռ, քանի մը պարագայից մէջ, մկանային զորութեան (tonicité musculaire) ջնջումն ամբողջական չըլլար: Մերթ ենթակայն կը խորդայ, աչքերը կատարելապէս փակեալ են, եւ ակնային գնաբերը դէպ ի վեր դարձած, կոպերը թեթեւ եւ միակերպ թրթուման մէջ կը գտնուին:

Մորթն արտաքին զրգումանց անզգայ է, այնպէս որ ենթակային մարմինը կրնամք խայթել եւ խոցել առանց ամենողոյնց ապառաժանելու: Մասնական զգայարանաց յատկութիւնքն ալ բնաջինջ եղած են, եւ կրնամք ենթակայի ակնային մօտ պոռալ կանչել, առանց կարենալու զինքը քնափական վիճակէ սթափեցունել: Իսկ եթէ ուղղակի մկանց վրայ, կամ նոցա թընդերաց վրայ եւ կամ զանոնք ոգեւորող ջղաց վրայ մեքենական քիչ շատ զօրաւոր զրգուման մը ընեմք, իսկոյն մկանց կարկամութիւնն (contraction) յառաջ կը բերեմք: Եւ այս է ահաւաստի քնափութեան ամենահետաքրքրական երեւոյթն եւ մկանց այս յատկութիւնը Շարքո ուսումնասիրած եւ ջղամկանային գերզգուականութիւն անուանած է (Charcot et Richer. Progrès médical, 1881): Օրինակի աղագաւ, եթէ բազկին երկազլի մուկն (muscle biceps) թրեմք կամ շազվեմք, իսկոյն յառաջարագու կը (avant-bras) կը խոնարհի բազկին վրայ: Եթէ արմկան ետեւի եւ ներքին մասին վրայ գտնուող ճուրճանի (gouttière) մէջ ծղային ջիւն (nerf cubital) ճնշեմք, իսկոյն ձեռն ի ներս կը կարկամի եւ երկու յետին մատունք կը կծկին: սոյն երեւոյթը, լիովին ջղի անգամահատական գրից համապատասխանելով, խորթութեան եւ կեղծման գաղափարները բոլորովին կը փարատէ:

Այս կերպ փորձերը գործարանաւորութեան գրեթէ ամեն կարգի մկանց եւ ջըղաց վրայ կարող եմք կրկնել եւ մի եւ նոյն արդիւնքներն յառաջ բերել (ի բաց տեալ երեսի մկանքը). կարկամութիւնը մըշտատեւ են եւ նոցա վերածման համար ի գործ դրուած ճգանց կը զիմայրեն: Իսկ է միայն հակառակաշարժ մկանունքը գըրգուել: Օրինակ իմն, եթէ կորացուցիչ մկանունքն են (muscles réflexisseurs) որ կարկամութիւն կը պատճառեն, պէտք է երկայնիչ մկանունքը գրգուել, եւ կամ կարկամեալ մկանց վրայ թեթեւապէս յաճախակի ճնշումներ ընել:

Քննափութեան վիճակաւ արուեստագէտ ձեռք բերուած կարկամութիւնը տեղափոխման (transfert) ենթակայ են, այսինքն եթէ չկարկամեալ անդամաց կողմը մագնէտ մը մօտեցնեմք, քիչ ժամանակէ յետոյ այս վերջինս կը կարկամի, մինչդեռ առաջինն իւր նախնական ձեւը կ'առնու:

Քննափութեան մէջ տեղի ունեցած կարկամութեան խնդիրն յանգ հանելու համար, պարտ է մեզ մի քանի բաւ եւեթ արտասանել կարգ մը նոր երեւութից վրայ, որ մորթի մակերեւութին զրգումանէ կը ծագին մի միայն ուշաբարձելի անձանց վրայ եւ զորս Ռիչէ եւ Պրիստո մասնաւորապէս ուսումնասիրած են (Progrès médical 1880): Ար թուի թէ սոյն կարգի կարկամութեանց յառաջբերման համար ուշաբարձական վիճակն անհրաժեշտ է, վասն որոյ ուշաբարձութեան հետ պիտի նկարագրեմք զայն:

Ար յաւելուեմք նաեւ որ տեղափոխման եւ փոխանցման երեւոյթներն մորթի մակերեւութային զրգումանէ ծնեալ կարկամութեանց մէջ տեղի չեն ունենար:

Վերջապէս ուշաբարձելի ենթակայից վրայ մերթ կիսակողմեան կարկամութիւնք (contractions hémi-latérales) կրնամք յառաջ բերել: Եւ այսպէս, ականջաց միայն մէջ փչելով, կամ ուղեանց մին խտրեմով, համապատասխանող կողմի անդամաց կարկամութիւն կը պատճառեմք:

Քննափութիւնը կը գագրի ենթակային աչաց վրայ թեթեւապէս փչելով, կամ արագապէս կոպերը բանալով եւ կամ այս երկու եղանակներն իրարու զուգելով:

Չարթնլէ յետոյ ենթակայն ամենայն ինչ մոցած է եւ յիշողութեան այս կորուստը քննական ամեն վիճակներէ յետոյ եւս կը մնայ:

Քննափութեան վրձակէ յարթութիւն անցումն ընդհանրապէս փոյթ եւ յանկարծակիան է, բայց եւ այնպէս մերթ ենթակայն քանի մը երկվայրկեան կոպերը կը թօթափէ եւ աչքերը կը շփէ իբր թէ ամենախոր քնէ մը զարթնուր: Չղային քունն որ եւ է ամենաթեթեւ հետեւանք իսկ չի թողուր ենթակային անձին վրայ:

ՊՈՂՈՍ ԷՄԻՐՁԷ

Չ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

ՉՈՒԱՐՃՍԼԻ ՀԱՇԵՒԻ ՄԸ

Ֆրանսայի վերջին թագաւորին Լուի Ֆիլիբի եւ վերջին կայսեր Նաբոլէոն Գ.ի անկման թուականները գտնելու համար հետեւեալ զուարճալի հաշիւը գտնելով լրագրաց մէջ, տեւորդ չեմ համարիր ներկայացնել Մատի ընթերցողաց:

Սոցա իւրաքանչիւրի ի գահ բարձրացման թուականին վրայ եթէ աւելցունենք իրենց ծննդեան կամ կանանց ծննդեան եւ կամ ամուսնութեան թուականներն (վերէ ի վար շարելով այս վերջի թուանշանք իբր միաւոր), գումարը կը ներկայացնէ իրենց անկման թիւն ամենայն ճշգրութեամբ:

Ահա օրինակները դիւրամբունելի լինելու համար.

Լուի Ֆիլիբ ծնած է	1775/ին
Ի գահ բարձրացած է	1830 »
Ամուսնացեր է Մառի Ամելիի հետ	1809 »
Մառի ծնած է	1782 »
Անկումն Ֆիլիբի (յեղափոխն. 48/)	1848 »

Նախ առնենք Ֆրանսացւոց վերջին թագաւորի ի գահ բարձրացման թուականն

1830	1
Սորա վրայ աւելցունենք յիշեալի ծննդեան թուական, թուանշանները վերէն ի վար գրելով բոլորն ալ միաւոր ինչպէս որ կ'երեւի	7
	7
	5

Գումարը պատասխանն է

1848

Նոյն թիւը վրայ եթէ Մառիի ծննդեան թուականն աւելցունենք նոյն արդիւնքը կ'ունենանք. ահա փորձը.

Ի գահ բարձրացման թուականն է	1830
Մառի ծնած է	1782
	1
	7
	8
	2

Արդիւնքն է նոյն 1848

Գարձեալ ի գահ բարձրացումն է	1830
Լուի Ֆիլիբի ամուսնութիւնն է	1809/ին
	1
	8
	0
	9

Արդիւնքն նոյն է նորէն 1848

Նաբոլէոն Գ. ծնած է	1808/ին
Ի գահ բարձրացած է	1835 »
Ամուսնացած է Էօթէնիի հետ	1835 »
Էօթէնիի ծնունդն	1826 »
Անկումն է	1870 »

Ի գահ բարձրացումն է 1835

Կայսեր ծնունդն	1
	8
	0
	8

1870

Նորէն. ի գահ բարձրացումն է 1835

Էօթէնիի ծնունդն է	1
	8
	2
	8

1870

Ահա վերջինն ալ. Նաբոլէոնի ի գահ բարձրանալն է 1835

Ամուսնութեան թուականն	1
	8
	5
	5

Գումարն է նոյն 1870

Հ. ԷԿԵՆԵԱՆ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Բ Ո Յ

Օգոստոս 15 ԷՆ 21

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ար յիշուի թէ հոշակաւոր ֆաւլարս զօրաւորին հետ ուսու հիւպատոսներուն Պուլկարիայէ մեկնելուն վրայ, ուսուհագատակաց պաշտպանութիւնն յանձնուած էր Փրանսական ընդհանուր հիւպատոսին: Այժմ, այս Փրանսական գործակալ Լա պուլկար կառավարութեան հետ յարաբերութիւնը խղած եւ միանգամայն Պուլկարիայէն մեկնելու հրաման ստացած լինելով, Ռուսիա ի Պուլկարիա բնակեալ իւր հպատակները բոլորովին անպաշտպան թողած է: Կըսուի թէ ուսու կառավարութիւնը կը յուսայ որ ի մօտոյ գործողութիւն մը պիտի լինի Պուլկարիոյ մէջ, թուրքիոյ կամ Ռուսիոյ, եւ կամ երկուքին կողմէ միանգամայն, եւ յայնժամ Պուլկարիոյ ուսուհպատակները լիովին պիտի պաշտպանուին:

— Ի Պերլին, Արեւելեան լեզուաց նորահաստատ ձեւարանն ընդունուելու համար այնչափ բազմաթիւ աշակերտը դիմեցին որ անկարելի պիտի լինի ամենքն ալ ընդունել: Ինչպէս յայտնի է, այս վարժարանէ ելնողներ արեւելեան երկրաց մէջ հիւպատոսական եւ դեսպանական պաշտօններով պիտի կոչուին աստիճանաբար:

— Կ. Պոլսոյ ուսուական դեսպան Պ. Նէլլատով ի ֆէսինկէն երկար խորհրդակցութիւն մ'ունեցեր է Պիզարը իշխանին հետ: Ուշադրութիւն կը գրաւեն այս միջոցն ուսու եւ գերման դակլիմներուն միջեւ տեղի ունեցած սերտ հաղորդակցութիւնը

պուլկարական խնդրոյն վրայ թէ ինչ ելք պիտի ունենան այս բանակցութիւնը՝ քիչ ատ կը գզացնէր հեռագիր մը, որ կ'ըսէր թէ «Գերմանիա տրամադիր է նորանոր զինուորներ ընել Ռուսիոյ՝ պուլկարական խնդրոյն մէջ»:

—Սոփիայէ կը հեռագրուի առ Սոփիայ, թէ Ֆերտինանտ իշխանն յոյժ վհատած է ամեն կողմէ լքուելուն եւ մինակ թողուելուն համար: Հիւպատոսը իւր քով չեն երթար եւ պուլկար քաղաքագէտը մի առ մի կը մերժեն նախարարական պաշտօն ստանձնել:

—Թէհրանէ հեռագիր մը կ'ըսէ թէ Եյուպ խանն եւ իւր ընկերքը, որ օգոստոս 14ին փախած էին Թէհրանէ, յաջողած են ի դերեւ հանել պարսիկ ստիկանութեան հսկողութիւնն եւ թէ նոցա ձերբակալման համար ազգու միջոցներ ձեռք առնուած են:

—Բեղրադուրի անզը նախորդ դեսպան Լորտ Լոֆգուս սնանկացեր է:

—Եպատ. 8/20ին մեծ միդիկ մը տեղի պիտի ունենայ ի Հոմ, բողոքելու համար Պապին հետ հաշտուելու գաղափարին դէմ:

—Անգլիոյ Երեսփոխանաց ժողովն օգոստոս 27ի գիշերն 194ի դէմ 272 ձայնով մերժեց Պ. Կլաւսոնի մէկ առաջարկն որ կը պարսաւէր կառավարութեան իւրանտական աշխարհավարութիւնը:

—Բարիզէն կը հեռագրեն. թէ Երանձինի, Մոնդէնի փողոցի մարդասպանն, այս չորեքշաբթի առաւօտ գլխատուեր է առանց ո՛չ մէկ խստովանութիւն ընելու:

—Պուրէշէն հեռագիր մը գրոյց մը կը յիշէ թէ Պուլկարիոյ Ֆերտինանտ իշխանն ի մօտոյ ուղեւորութիւն մը պիտի ընէ յԵւրոպա:

Ն Ե Ր Ք Ի Ն

Վեհ. Սուլթանի գահակալութեան ԺԱ տարեդարձն համակրանաց եւ ցնծութեան ընդհանուր ցոյցերով տօնուեցաւ մայրաքաղաքին մէջ ինչպէս նաեւ Թուրքիոյ ամեն կողմն եւ օտար երկիրներ զըտնուող օսմանեան հպատակաց կողմէ:

Չորեքշաբթի օրը բոլոր նախարարք ու պետական բարձր պաշտօնեայք կայս. պալատ գնացին ի շնորհաւորութիւն. նոյնպէս և հպատակ հասարակութեանց հոգեւոր պետերն որոց սմանը պատիւ ունեցան Վեհ. Սուլթանին բերկայանալու: Ն. Վեհափառութիւն իւր ներկայութեան ընդունեց նաեւ Մեծ-Եպարքոսը, Եէյս-իւլ-իսլամը, նախարարներն եւ երեք նախկին Եպարքոսներ՝ Սայիտ, Էտհէմ ու Խայրէտտին փաշայները:

Երկուշաբթի, ամեն տարու ընէ աւելի չըբեղ լուսավառութիւններ եւ հրախաղութիւններ կատարուեցան մայրաքաղաքին մէջ ձովու եւ ցամաքի վրայ, եւ համայն ժողովուրդը ցնծագին տօնեց իւր սիրեցեալ Վեհապետին գահակալութեան տարեգործը:

—Վեհ. Սուլթանն իմթիազ պատուանշանի սակի եւ արծաթ շքադրամները նուիրեց Նիւտական նախարար Վսեմ. Ջիւհափ փաշային:

—Երկրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Բազէշի նորընտիր կուսակալ Էտհէմ փաշայի որ անցեալ շաբթու կայս. պալատ երթալէ յետոյ, իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ:

—Իւսկիւտարի նախնական ատենի պատժական ճիւղն իւր ամբողջութեամբ Պոլիս

փոխադրուեցաւ «Պոլսոյ նախնական դատարանի պատժական ճիւղ անուամբ»:

—Տիրանակերտի մէջ Սըտքը Էֆէնտիի դէմ ձէմիլ ու Սաիտ փաշաներու որդւոց եւ անոնց սպասուորներուն կողմէ ի գործ դրուած բռնաբարման դատն երկու ամիս առաջ քննուելով Պոլսոյ ոճրագատ ատենին առջեւ, ամբաստանեալք անմեղ հոշակուած եւ արձակուած էին: Ըստ հըրամանի Գատական նախարարութեան, վճարելի ատենը քննելով խնդիրն, օրինաց հակառակ գտաւ տրուած անմեղութեան վճիռն եւ բեկանեց զայն: Հետեւաբար այս դատ ոճրագատ ատենին պիտի ներկայանայ վերստին: Ամբաստանեալք, որք ազատ թողուած էին, կրկին պիտի ձերբակալուին մինչեւ որ ոճրագատ ատենն իւր որոշումը ապա:

—Երաշուութենէ տագնապող նահանգաց ժողովրդեան օգնելու համար, եւրոպական նախարարութիւնն հրամայեց այդ նահանգաց կուսակալներուն՝ յառաջիկայ հնձոց համար բաւականաչափ սերմանիկ բաշխել երկրագործաց որք անոր փոխարէնը պիտի հատուցանեն յառաջիկայ հնձոց ժամանակ:

—Բէշլայի մէջ հրատարակեալ Ռեֆէս ԳՕ-ընա Փրանսերէն լրագրին ի Թուրքիա մուտքն արգիլուեցաւ:

—Գուրպան Պայրամի տօնին առթիւ, Վեհ. Սուլթանն Ա. կարգի Օսմանիէ պատուանշան շնորհեց ներքինապետ Եէշէֆէտտին ազայի, Ստաքադի ականակուռ չքադրամն Ղազի Օսման փաշայի (այս չքադրամ հաստատուած է Վեհ. Սուլթանի Օգոստոս փառ հօր Սուլթան Ալտ-իւլ-Մէճիտի օրով) եւ Մէճիտիյէի ականակուռ պատուանշան արարողապետ Միւնիր փաշայի:

—Բիզա Պէյ, կայս. նախորդ գովաւէր ի Պուլկարիա, ընդարձակ տեղեկագիր մը մատուցած է առ Բ. Իուսն, ի մասին Պուլկարիոյ վերջին անցից եւ իշխանապետութեան արդի կացութեան:

—Շարթուս մէջ ելաւ կայս. Իրատէն որ կ'արտօնէ Տէրքոսեան ջրի ընկերութիւնը՝ Պոլսոյ կողմն ալ խողովակներ անցունել եւ ջուր բաշխել:

—Երզնկայի Քեմալս գիւղաքաղաքի թուրք բնակչաց ումանը նամակաւ մը՝ ուղղեալ առ Թարէք, թուելով Քիւրտերու շարագործութեանն, ձեռնհաս իշխանութեան ուղղութիւնը կը հրաւիրեն, յայտարարելով թէ Երզնկայի կառավարիչը բնաւ նկատողութեան առած չէ իրենց կողմէ այս մասին եղած բողոքներն:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ամեն Ս. Պատրիարք Հայրն այս չորեքշաբթի օր կայս. պալատ գնաց Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձին առթիւ իւր շնորհաւորութիւնները մատուցանելու եւ ընդունուեցաւ երկրորդ սենեկապետ Հաճի Ալի պէյի կողմէ որ, հրամանաւ Վեհ. Սուլթանի, հրաւիրեց զՆ. Սըբազնութիւն ներկայանալ Ն. Վեհափառութեան: Ս. Պատրիարքը պալատան մեծ դահլիճն առաջնորդուելով՝ անդ Վեհ. Սուլթանին ներկայանալու մեծ պատիւն ունեցաւ: Ն. Վեհափառութիւնն յոյժ սիրալիր կերպիւ ընդունեց զՍ. Պատրիարքն եւ կայս. գահայից վրայ բազմելով իւր դէմ նստեցոց զՆ. Սըբազնութիւն. Ն. Վեհափառութեան շնորհալի թոյլտուութեամբ գործակատար Աբրահամ Էֆէնտիի եւս պատիւ ունեցաւ գահայից դահլիճն ընդունուելու: Ս. Պատրիարքն յոյժին կանգնելով ուղերձ մը արտասանեց, որով դրուատեց Վեհ. Սուլթանին՝ իւր գահակալութեան օրէն ի վեր երկրին եւ ժողովրդեան բարգաւաճման համար հայրական հոգածութիւնն ու զանա-

զան շնորհները, մանաւանդ յիշատակելէ յետոյ անբաւ գթութիւնները զորս Ն. Վ. Վեհափառութիւնն ըրած էր թէ՛ սովէ եւ թէ՛ հրդեհներէ արկածելոց, յայտարարեց թէ Հայ ազգն ամբողջ, թէ՛ ի գաւառս եւ թէ՛ աստ ի Պոլիս, տիւ եւ գիշեր միշտ կ'ազօթէ Ն. Վ. Վեհափառութեան համար:

Օգոստոսի առ Սուլթանն ի պատասխանի սոյն ուղերձին, իւր Բարձր գոհունակութիւնն յայտնելէ յետոյ ըսաւ թէ արդէն գիտէ որ իւր հաւատարիմ հայ հպատակ ժողովուրդը միշտ բարեմաղթու է իրեն եւ թէ լսած է որ այս վերջին ատեններս արկածելոց մասին եղած օգնութեանց ունը պատից առթիւ եւս բարեմաղթութիւններ եղած են: Յետոյ Ն. Վեհափառութիւնն յարեց. «Արկածելոց մասին ինչ որ կ'արեւին է ի գործ պիտի դնեմ: Եստ գոհ եւս ուրախ եմ Հայոց հաւատարմական ըզգացումներէն: Իմ բարեւերովս հանդերձ «Հաղորդեցէք իմ գոհունակութիւնը ձեր ժողովրդեան»:

—Բարեյիշատակ Օսեան Գրիգոր Էֆէնտի, որոյ մահուան գոյժը շարթուս հասաւ Բարիզէն, վեց եօթը տարի առաջ կը տառապէր արդէն յօդացաւէ, երբ մեկնեցաւ Կ. Պոլսէն: Բայց ի Բարիզ սրտի հիւանդութիւնն եւ «լեւ-օն-ըն-ըն» կարի ծանրացումն նորա վիճակը: Թէեւ Փրանսական օստմանն ճարտարագոյն բժշկաց ձեռամբ դարմանեալ, տարիէ մ'ի վեր շատ կը նեղուէր այս բազմատեսակ հիւանդութիւններէ: Ողբալի դէպքն որ սգոյ մէջ կ'ընկղմէ զՎազն, տեղի ունեցաւ օգոստ. 14, ուրբաթէն շաբթի լուսնալու գիշերը: Թաղուել կատարուեր է կիւրակէ օրը Բարիզի Բէն-Լաշէզ գերեզմանատան մէջ, ի ներկայութեան ազգայնոց մեծ բազմութեան եւ հոգեւոր պաշտօնը կատարած է Մարտիրոս հայ բաշանայն Տ. Սահակ Իւթիւճեան: Վսեմ. Օսեան Էֆէնտի ամուրի էր Վերջին օրերուն իւր ընտանիքէն՝ իւր քով կը դանուէին իւր քոյր Օռ. Եւփիմէ, թարգմանիչն Աբբաս Բեմալ-Էփի, եւ իւր եղբոր՝ Խաչիկ Էֆէնտիի աներորդին: Տոբք. Թագուր Արսլանեան:

—Իրմաքսեան Գեր. Հույսեակ Եպիսկոպոս անձնական տկարութեան պատճառաւ խնդրած է Ամեն. Ս. Պատրիարքէն ջնջել իւր անունը Կարնոյ առաջնորդական ընտրելեաց ցանկէն:

—Պ. Ռափայէլ Պատկանեան տակաւին մայրաքաղաքս կը գտնուի եւ բազմաթիւ այցելութիւններ կ'ընդունի. մեծ անուռ բանաստեղծը սիրալիր ընդունելութիւն մը կը գտնէ ազգայնոց ամեն դատակարգէն:

—Շարթուս մէջ ցաւալի կորուստ մը ունեցանք յանձին Կիւմիւշէրտան Ռուբէն Էֆէնտիի որ մեռաւ ի հասակի 55 տանց: Հանգուցեալը ծանօթ եւ սիրելի էր ո՛չ միայն իր արարիւ անձ եւ պատուաւոր վաճառական, այլ ազգային գործոց մէջ իւր ունեցած մասնակցութեամբ, իւր ընտանեկիրութեամբ եւ աղքատասիրութեամբ: Կիւմիւշէրտան Էֆէնտի վարած է երեսփոխանական եւ այլ ազգային պաշտօններ, մեծ անձնաւորութեամբ եւ ուղղամտութեամբ եւ քաջալերող հանդիսացած է ամեն բարենպաստակ գործի: Յուզարկուուցաւ Բերայի Ս. Երրորդութիւնն եկեղեցւոյն մէջ, ի ներկայութեան Ամեն. Խրիմեան Հայրիկի, Նար-Պէյ եւ Օրմանեան Սըբազաններու եւ բազմաթիւ վարդապետաց ու բաշանայից. յուզարկուորութեան ներկայ էր խուսն բազմութիւնն ազգայնոց որք իրենց ցաւակցութիւնն յայտնեցին հանգուցելոյն հարազատից՝ Մեծ. Տիրգրան եւ Գրիգոր Էֆէնտիներուն: Խրիմեան Հայրիկ խօսեցաւ դատարանական, յուզիչ բանիւր պատմելով հանգուցելոյն օրինակելի կեանքը: Ռուբէն Էֆէնտիի մարմինն ամփոփուեցաւ Ֆէրի գիւղի գերեզմանատան մէջ, իւր հանգուցեալ մօր գերեզմանին քով:

—Գեր Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան չորեքշաբթի օրը մեկնեցաւ մայրաքաղաքէս յԷփմիածին, իւր ուսուցչական կարեւոր պաշտօնի գլուխն անցնելու, յոր կը կոչէ զինքը Վեհ. Մակար Կաթողիկոսն:

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅՈՆՉՆԱՐԱՐԵՆԻՔ ՀԵՏԵԻՆԱԼ ՀՈՏԱԻՏՆ ԵՒԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար Ambrosial cream, օճառուտ քաշած ամիլուայ մարդու համար. Crème de Fraises մորթը կակուղցնելու համար. Poudre de Cyprès զովացնելու եւ ճերմկցնելու համար մորթը. Stilboïdeֆայլ տալու համար մազերուն եւ մորուքին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia ակուայներու համար. Eau de Chypre արդուզարդի համար: Քաշկինակի համար հոտաւէտ նիւթեր՝ Héliostrate, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine. 977 9—26

ԿԱԼԶԻԻ ՄԻՋՈՏԱՍՊԱՆ ՓՈՇԻՆ
 ԱՄԵՆԱԶԳՈՒ ԴԵՂ ՍՆԵ ՄԼՈՒԿՆԵՐՈՒ, ԼՈՒԵՐՈՒ, ՈՂԻՆԵՐՈՒ, ՃԱՆՃԵՐՈՒ, ՄՓԵՂՆԵՐՈՒ, ՄՐՉԻՆՆԵՐՈՒ, ԹՐԹՈՒՐՆԵՐՈՒ, ՆՈՐԵՆԻ ՈՐՂԵՐՈՒ ԵՆՆ ԴԷՄ:
 Քիլոն կը ծախուի 12 Փրանք. թըղթատարութեան միջոցաւ, 100 կրամն 1.95 Փր. է.— Դիմելու է առ է. ԿԱԼԶԻ, 71, Գուա տ'Էրոյսնվիլ, Լիոն:
 Արեւելից համար ներկայացուցիչն է Դեղագործական Միջերանոցն, Ղալաթիոյ Մեծ Փողոց, 35, Կ. Պոլիս:
 796 10—10

ՕՐԱՅՈՅՑ 1888

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ
 Ս. ՓՐԿՉԵԱՆ ԱԶԳ. ՀԻԻԱՆԴԱՆՈՅԻ
Գին 40 փարա
 Մասնաւոր վաճառատեղին է գրավաճառ Յովսէփ Էֆ. Գալաֆեանի գրատունը, Կ. Պոլիս, Չաքմաքճըլար-Եօքուչու, թիւ 20.
 Հիւանդանոցի - Հոգաբարձութեան կնիքը չկող օրինակներն անվաւեր են.
 1071 4—10

ԲԱՐՍԵՂ Ե. ԷՔՍԷԻՃԵԱՆ
ՇԻՆԵՄՔ
ՃԵՄԱՐԱՆՆ ԻՍԿԻՏԱՐԻ
 Սոյն տետրակը պատրաստուած է պատմական ճեմարանին վերաջինութեան համար, որ այժմ մոխիր է և աւերակ. ամէն հայ նուիրական պարտականութիւն մ'ունի այդ տեղւոյն. արժանի է որ ամէն ոք առնու և կարգայ սոյն խիստ սրտաշարժ և գեղեցիկ ոճով գրուած տետրն:
 Կը վաճառի ամէն գրավաճառաց քով:
 Գին 2 1/2 դահեկան
 1078 2—3

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ
 ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
 ԵՐՈՒԱՆԴ Կ. ԳԱՐՔԱԼԵԱՆ
 Դասարան
 Չափական գիտութեանց
 Ազգային դասատուներէն երուանդ էֆ. Կ. Գարթալլեանի սոյն դասագիրքն, որ կը պարունակէ թուարանութեան տեսական և գործնական մասը միանգամայն, բազմամեայ փորձառութեան և մեծ խնամոց արդիւնք է:
 Թուարանութեան բոլոր կանոնք կոկիկ և դիւրամբունելի ոճով բացատրուած են, և

մեղրական, շահու և վաճառականական հաշուոց վերաբերեալ կանոնք ընդարձակ տեղ մը կը գրուեն սոյն նոր դասագիրքին մէջ:
 Բաց աստի, մասնաւոր ուշադրութիւն եղած է որ իւրաքանչիւր կանոնի յարակից խնդիրք թուրքիոյ առեւտրական գործառնութեանց և առտնին կենաց պիտոյից համաձայն ըլլան, առանց որոյ թուարանակա խնդիրք չատ անգամ տաղտկացուցիչ և աւերող կ'ըլլան:
 Հմուտ թուարանին սոյն աշխատասիրութիւնը մեր աղք. վարժարանաց մէկ զգալի պէտքը կուգայ լրացնել և բառնալ աշակերտաց ձեռքէն աւանդական դրութեամբ պատրաստուած շատ մը դասագրեանք:

Կը գտնուի ամէն գրավաճառաց քով, կեդրոնատեղին է Յակոբեան խան, թիւ 14, Եւրոպական գրատուն, Ա. Պոլիս: Գինն է 10 դրուչ
 Շատ առնողին մասնաւոր զեղչ կ'ըլլուի:
 886 24—50
 վասն Արտօնատեան Տիօրէն-Պատասխանատու Մ. ՍԱՄՍԵԱՆ
 ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՑ

ՄԼՏԵՍՍ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ
 ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ ՄԼՔ. ՆՈՐՈՒԳՈՒՄ
 (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)
 Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը: Գլխու թեփը շուտ մը անկրկութիւն կ'ընէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտակ:
 "Մէկ շիջ կը բաւէ:" Եւր փորձը ունեցան ամենքը որոնցմոխրագունած մազերը իրենց բնական գոյնին դարձան, և ճաղատ տեղերը մաքուր ծածկուցան:
 Կերկ չէ, և ամենեկն զեան մը ընեն: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիջ մը ստացիր Քիլոն Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ համար խորհակտ խոյն նորոգողն:
 (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)
 Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
 Կոյնպէս Բարիզ ու Նիու Եօքք: Կրկնաճառուի ամէն սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով:
 Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էամբընա Քարուան, Անգլիական միջերանոց, Եիւքսէք Գալտըրըմ. և Իզիտօր Լագանտէլլա 433, Բերա Մեծ փողոց:



ՀԵՐՏԵՆԵԿԸՆ ԾԵՂԿԵՓՈՒՆԸ
 ԳԵՂԵՑԿԵՑՈՒՆՈՂ ՄԵՐՄՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ ԾԵՂԿԵՓՈՒԹ, ՄԻՇՏ ԹԵՐՄ:
 Ընգամուած մը փորձը պիտի համոզէ ամէն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամէն հեղանիսթներէ և բազմաթիւ փոշիներէ: Եւ աչին անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խիզոն որ երեսը, վիզը, թեկերը և ձեռքերը պիտի առնուն անոյշ փափկութիւն մը և մարմարիտի փայլ, հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ: Սպորտի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցուն: Ընհետ կ'ընէ մորթի սեւութը, երեսի և ձեռքի ցանրը, արևայրուքը, և ուրիշ ամէն բրտութիւն և բժաւորութիւն: Եւ աս ամէն բանով անկարելի կ'ընէ մասնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:
 Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Նիու Եօքք: Կրկնաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով:
 Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էամբընա Քարուան, Անգլիական միջերանոց, Եիւքսէք Գալտըրըմ. և Իզիտօր Լագանտէլլա 433, Բերա Մեծ փողոց:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒ:
ՄԼԼԵՐՈՒ
 ՄԼՔԵՐՈՒ ՄԼԿ ՀԵՏԻԿ ՆՈՐՈՒԳՈՒՄ
 Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմակած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:
 Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիջերու մէջ:
 Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Նիու Եօքք:
 Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էամբընա Քարուան, Անգլիական միջերանոց, Եիւքսէք Գալտըրըմ. և Իզիտօր Լագանտէլլա 433, Բերա Մեծ փողոց:

